Դրեք հնգերներ, ծածկեցեք խոտով,
Գևորգ Չավուշը մնաց կարոտով:
Վերջին իմ բարևը տարեք հայերին,
Ասացեք՝ Գևորգ կոիվեց յուր ապգին,
Ասացեք՝ Չավուշ կոիվեց յուր ապգին:

360. ԵՍ ՀԱՆԵՑԻ ՍՈՒՐՍ ՊԱՏՅԱՆԻՑ

Ես հանեցի սուրս պատյանից, արտասունքով օծեցի,
Տրտմավ անուշ սիրականս, երբ իմ ողբս կարդացիր:
Նա երդվեցավ յուր սրրովը չխնայել թուրքերին,
Այս պայմանով աշխուժ քաջին սուր, հրացան հանչնեցին:

Աստված սիրեք, հայ աղջիկներ,
Եկեք, խորհենք միասին,
Կրկ. Այսուհետև էլ չսիրենք
Կռվից թախչող վախկոտին:

Կգա գարուն, մենք կսպասենք
Նոր բախա, պայքար թուրքի հետ,
Մեր լեռներից պիտի հոսի
Արյունն ինչպես հեղեղ ու գետ:

361. ԹԵՎԻ ՎԵՐՔԸ

Կրկ. Սոտիկ իմ, արի, իմ սարի որդի
Թշնամու գնդակ չի ծակեր ընչի:
Մոմոում էր իմ վերքեր անկողնու վրա,
Հայ եղբայր գնդակով ես վերք ստացա,
Հայ եղբայր գնդակով յարալու եղա:

Գայլի պես կոիված թուրքի պետություն,
Սարերի գլուխ թափվեց մեր արյուն,
Մոմոում էր իմ վերքեր իմ թևի վրա,
Հայ եղբայր գնդակով յարալու եղա,
Հայ եղբայր գնդակով ես վերք ստացա:

362. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

ԵՐԿՆԱՑԻՆ, ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Գոմշի կաշի,
Ոչ կհալի, ոչ կմաշի:
(ԵՐԿԻՐ)

2. Էն ի՞նչն ա, ինչ.
Անգերան շինած ա,
Անսին կաղնած ա:
(ԵՐԿԻՆՔ)

3. Երկեն կարպետ՝ ծալվիլ չի,
Վրեն մանդր քարեր՝ համբարվիլ չի:
(ԵՐԿԻՆՔ)

4. Էն ի՞նչն ա, ինչ.
Ինքը մինն ա, աչքերը՝ հապար:
(ԵՐԿԻՆՔ)

5. Էն ի՞նչն ա, ինչը.
Որ ոնչ խուփ ունի, ոնչ էլ՝ սին:
(ԾՈՎ ՈՒ ԵՐԿԻՆՔ)

6. Քիր ու ախպեր մի դպում
Քշեր-ցերեկ իրար եդնա վապում են,
Ամա հասնում չեն:
(ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ)

7. Մի ծով կա,
Էրեսին քիր ու ախպեր ման են
գալի գյամով:
(ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ)

8. Ախպերը գնում է քվորը դոնաղ,
Քիրը կորչում է:
(ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ)

9. Մեր տան քըմակին մի մեծ կըրկենի:
(ԱՐԵԳԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՇՈՂՔԸ)

10. Ըստե պուպուկ,
Ընդե պուպուկ,
Էրթըկեն դուս:
(ԱՐԵԳԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՇՈՂՔԸ)

11. Կրակն ընկնի՝ էրվիլ չի,
Ճուրըն ընկնի՝ խեղդվիլ չի:

(ԱՐԵԳԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՇՈՂՔԸ)

12. Էն ի՞նչն ա, ինչը.
- Ալամա գեդան որդիա՞ն ես գալի:
- Ծովիցն եմ գալի:
- Քա խր՝ չես թաց:
- Կիսիցն եմ գալի:

(ԱՐԵԳԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՇՈՂՔԸ)

13. Էն ի՞նչն ա, ինչ.
Ինքը մի ամսական.

(ԼՈՒՍԻՆ)

14. Սարի դոշին՝ կես հաց:

(ԼՈՒՍԻՆ)

15. Էն ի՞նչն ա, ինչ.
Տասնհինգ ցորնից մի կրկենի:

(ԼՈՒՍԻՆ)

16. - Աչաչ-ըաչաչ, որտե՞ղ ես գալի:
- Ծովեն եմ գալի:
- Քաս ինչի՞ չես թաց.
- Կիսեն եմ գալի:

(ԼՈՒՍԻՆ)

17. Ըստեան Ըրեվան, մանդր-մանդր քրեղան:

(ԱԱՏՂԵՐ)

ԲՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

18. Էն ի՞նչ ա, ինչը.
Ինքը էծ,
Մեջքը պեծ:

(ԿԱՑԾԱԿ)

19. Մի գոմեշ ունեմ,
Որդի պառկում ա,
Ընդի խոտ չի դուս գալ:

(ԿՐԱԿ-ԾՈՒԽ)

20. Էն ի՞նչ ա, ինչը.
Մերը ծնվելիս ա ըլըմ,
Ըրեխեն կտրիցը քոմագ ա կանչըմ:

(ԿՐԱԿ-ԾՈՒԽ)

21. Էն ի՞նչ ա, ինչը.
Հերը դեռ չի ծնվել,
Տղեն բաղար ա գնում:

(ԿՐԱԿ-ԾՈՒԽ)

22. Էն ի՞նչն ա, ինչը.
Ձին թամքեցին, երդկեն հանեցին:

(ԿՐԱԿ-ԾՈՒԽ)

23. Ծամում եմ՝ ծամվում չի,
Անծամել կուլ եմ տալի:

(ՋՈՒՐ)

24. Անբուսը անծին վեր ելավ, անդադարի գլխովն անց կացավ:

(ՋՈՒՐ)

25. Էն ի՞նչն ա, ինչը.
Քշեր-ցերեկ գընըմ ա,
Ետ չի մտիկ անըմ:

(ՋՈՒՐ)

26. Էն ի՞նչ ա, ինչը.
Ես ընրա եդնեն կերթամ,
Նա իմ եդնեն գալ չի:

(ՋՈՒՐ)

27. Ռոնեմ բռնռվս մին,
Վեր թողում աշխարհովս մին:

(ԱՄՊ)

28. Արեն ծովեն ջուր կըխըմի,
Ֆռանգի պես չեն կը հանի:

(ԱՄՊ)

29. Մեշումը ման եմ գալի,
Ոսկի, արծաթ շաղ եմ աալի:

(ՑՈՂ)

30. Ձիգ, չիգ, չիգ չվան,
Ձիգ չվան ա աափի պես,
Երևանա վարդի պես:

(ԾԻԱԾԱՆ)

31. Ըաաի չոքում եմ,
Քաղդաղ ջուր խմում:

(ԾԻԱԾԱՆ)

32. Էն ի՞նչն ա, ինչը.
Վապում եմ՝ վապում ա,
Կանգնում եմ՝ կանգնում ա:

(ՍՏՎԵՐ)

33. Ուր որ գնամ՝ հետս կգա:

(ՍՏՎԵՐ)

34. Էն ի՞նչն ա, ինչ.
Դվորը գնաս՝ կգա,
Որ շվաքը մանես՝ կկորչի:

(ՍՏՎԵՐ)

35. Էն ի՞նչն ա, ինչը.
Կրակն ընկնի՝ երվիլ չի,
Ջուրն ընկնի՝ թրջվիլ չի:

(ՍՏՎԵՐ)

36. Էն ի՞նչն ա, ինչը.
Քերան չունի ցեն է տալիս,
Ոտներ չունի՝ ման է գալիս,
Հոգի ունի,
Մարմին չունի:

(ՔԱՄԻ)

37. Սպիտակ ա, բամբակ չի,
Կլորակ ա՝ գնդակ չի:

(ԿԱՐԿՈՒՏ)

38. Ելանք վերը
Կտրինք թելը,
Թափավ սուլթան սիսեռը:

(ԿԱՐԿՈՒՏ)

39. Զարմանալի գել ա գալիս,
Ծառի սմբուլ վեր ա գալիս,
Ոտներ չունի՝ ման ա գալիս,

40. Քերան չունի՝ կուլ ա տալիս:

(ՁՁՈՒՆ)

41. Կգա աղի պես,
Կնստի փաշի պես,
Կլինի խսիլ,
Կգնա հեսիր:

(ՁՁՈՒՆ)

42. Ապիտակ մորուքավորը
Առավ սարն ու ցորը:

(ՁՁՈՒՆ)

43. Էն ի՞նչն ա, ինչը.
Քար եմ, հմա քար չեմ,
Արև կանի, կհալչեմ:

(ՍԱՌՈՒՑՑ)

44. Էն ի՞նչն ա, ինչը.
Անկապին, անուրագ,
Կարմունք շինեց իս պապը,
Վրովը հապար ջան անկկացան:

(ՍԱՌՈՒՑՑ)

45. Ջշեմ չոկեր Երևան,
Մանդր-մանդր քրեղան:

(ՀԵՏՔ)

ԺԱՄԱՆԱԿ

46. Արաբ խանը բեղն ըլորեց,
Հարուր հպարտ մարդ գլորեց:

(ԳԻՇԵՐ)

47. Էն ի՞նչն ա, ինչը.
Արաբ-օղլին որ չոքեց,
Ջիթում ջան կրտորեց:

(ԳԻՇԵՐ)

48. Էն ի՞նչն ա, ինչ.
Տասներկու ախպեր մի ճամփով գնացին ու դեմ առան սահմանին.
Ոչ սահմանը անցնելու հնար կար,
Ոչ էլ ճամփից դուս գալու,
Ու մինչև հմի էլ նույն ճամփով գնում են ու գալի:

(ԺԱՄԱՆԱԿ)

49. Տասներկու չորթան
Ծարվեշարան կերթան:

(ԺԱՄԱՆԱԿ)

50. Էն ի՞նչն ա, որ չորս ռանգ ունի,
Իրեք ամիսը մին ռանգը փոխում ա:

(ԺԱՄԱՆԱԿ)

51. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի ծառ կա՝ տասներկու ճուղքն ունի, ամեն ճղքան վրա չորս տերև կա, կեսը՝ սիպտակ, կեսը՝ սև:

(ԺԱՄԱՆԱԿ)

52. Էն ի՞նչն ա, ինչը.
Էկավ օրով,
Գնաց տարով:

(ՆՈՐ ՏԱՐԻ)

53. Էրգեն աղիք,
Ծերը ծաղիկ:

(ՄԵԾ ՊԱՍ ԵՎ ՁԱՏԻԿ)

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

54 Էն ի՞նչ ա, ինչը,
Մի կով ունիմ, հանդին ա,
Պոկերը Ըսպահանդին ա,
Տարենը մի հեա կիթ կըգա,
Դեռ հլամ էլի հանդին ա:

(ԱՑԳԻ)

55. Էն ի՞նչն ա, ինչը.
Ինքը մանի,
Պոկերը Ըսպահանի,
Խանըմ տի կըթի,
Աղեն՝ բեջարի:

(ԾԱՌԸ)

56. Էն ի՞նչն ա, ինչը.
Ա՛ բոյով, թափ տամ քեզ,
Համ դու թեթևանաս, համ կշտանամ ես:

(ԾԱՌ)

57. Էն ի՞նչն ա, ինչը.
Ինքը պուճուր, աչքի ղուդամ,
Մեջը լիքը ջուր ու ատամ:

(ԽԱՂՈՂ)

58. Ինքը մին, աչքը՝ հապար,
Ըռավոդը կերթա բապար:

(ԽԱՂՈՂ)

59. Էն ի՞նչն ա, ինչը.
Դուպ հեր, ծուռտիկ մեր,
Խելոք քիր, գիժ ախպեր:

(ԽԱՂՈՂ)

60. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի եպ ունենք,
Չկել պոչը կտրում չենք,
Տուն մտնում չի:

(ՏԱՆՁ)

61. Էն ի՞նչն ա, ինչը.
Ծառի ծերին կորկի փոր:

(ԹՈՒՋ)

62. Էն ի՞նչ ծառ ա, որ անծաղկել բար ա աալիս:

(ԹՋԵՆԻ)

63. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի թորոն, մեջը լիքը կարմիր հուլունք:

(ՆՈՒՌ)

64. Էն ի՞նչ ա, ինչը.
Մի կարաս լիքը պծեռուկ:

(ՆՈՒՌ)

65. Էն ի՞նչ ա, ինչը.
Ուլանոց,
Ուլկաանոց,
Ուլան էկուն,
Կարմրակաուց:

(ՆՈՒՌ)

66. Կարմիր եկեղեցի,
Կարմիր հուլունք նի քաղած:

(ՆՈՒՌ)

67. Էն ի՞նչն ա, ինչը.
Ոսկե կճուճիկ,
Մեջն անուշիկ:

(ՆՈՒՌ)

68. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի կճուճ, մեջը՝ խուճուճ:

(ԸՆԿՈՒՁԶ)

69. Էն ի՞նչն ա, ինչը.
Ինքը ուռավ,
Թաւքը թռավ:

(ԸՆԿՈՒՁԶ)

70. Էն ի՞նչն ա, ինչը.
Ծաւիկը վեր ընգա,
Հին գդակս կորավ:

(ԸՆԿՈՒՁԶ)

71. Էն ի՞նչն ա, ինչը.
Ալրատունը ծառի ծերին,
Ջուռակը՝ փորին:

(ՓԵԱՏ)

72. Էն ի՞նչն ա, ինչը.
Անասեղ շապիկ,
Անջաղաց ալիր,
Անչաքուճ մեխ:

(ՓԵԱՏ)

73. Էն ի՞նչն ա, ինչը.
Կարմիր գառը,
Խոտի հետ խառը:

(ՄՈՐԻ)

74. Էն ի՞նչն ա, ինչը.
Սպիտակ հինեմ,
Կանաչ գործեմ,
Կարմիր կտրեմ:

(ՄՈՐԻ)

75. Էն ի՞նչն ա, ինչը.
Իմ պապը ծըմակըմը,
Ջալիկը քմակըմը,
Ճուտիկը փորըմը,
Ճլսպկեն գլխին,
Կամ սարըմը,
Կամ ձորըմը:

(ՄԱՍՈՒՐ)

76. Էն ի՞նչն ա, ինչը.
Դեղին հինեմ,
Սպիտակ գործեմ,
Կարմիր կտրեմ:

(ՀՄՆ)

77. Էն ի՞նչն ա, ինչը.
Գլխից բոնեմ, հետևից կրծեմ:

(ՁԿԵՌ)

78. Ըզպի-ըզպի-հինգ կորըզի,
Վա՜յ, իմ մի տարեկան մոզի:

(ՁԿԵՌ)

79. Եկեղեցի, բոլորեցի,
Դանկավ կարկի դուռը բացի,
Մտա մեջը համբուրեցի,
Ելա երդիկ քար թաքլեցի:

(ՁՄԵՐՈՒԿ)

80. Օլորեցի, բոլորեցի,
Դանկավ տվի դուռը բացի:

(ՁՄԵՐՈՒԿ)

81. Մի հորթ ունեմ,
Թոկավն ա ջուր խմում:

(ՁՄԵՐՈՒԿ)

82. Էն ի՞նչն ա, ինչը.
Ինքը մին ա,
Միջինը՝ հապար ու մին:

(ՁՄԵՐՈՒԿ)

83. Չաթուն ջուր խմի, հորթի փորը ուռչի:

(ՁՄԵՐՈՒԿ)

84. Էն ի՞նչն ա, ինչը.
Ցանեմ աճար,
Դուս գա բանջար,
Ծիշ տա սմբուլ,
Վեր գա կուճուճ:

(ԴԴՈՒՄ)

85. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի մութը աշխարհ,
Մեջը լիքը ժողովուրդ:

(ԴԴՈՒՄ)

86. Էն ի՞նչն ա, ինչը.
Գլխինը սպիտակ թաս ա,
Ծորերը դասվեդաս ա,
Քառասուն հագուստ ունի,
Ոչ մինը կոճակ չունի:

(ԿԱՂԱՄԲ)

87. Մինը կա՝ կենդանի չէ,
Թուխս ենք դնում, ճուտեր է հանում:

(ԿԱՐՏՈՖԻԼ)

88. Էն ի՞նչն ա, ինչը.
Գեդնի տակից դուս ա գալի,
Ծորերով մտնում ա տաք-տաք բաղնիս,
Որ դուս ա գալիս բաղնիսից՝ տկլորվում ա:

(ԿԱՐՏՈՖԻԼ)

89. Էն ի՞նչն ա, ինչը.
Տատը շորերը հագած նստած ա,
Ով շորերը հանի, նա լաց կելի:

(ՍՈԽ)

90. Էն ի՞նչն ա, ինչը.
Մորթվող ոչխարը լաց չի ելում,
Մորթող դասաքն ա լաց ելում:

(ՍՈԽ)

91. Պապս գետնի տակին,
Միրուքը՝ ըրեսին:

(ՍՈԽ)

92. Էն ի՞նչ ա, ինչը.
Գետնի տակին սև կծիկ:

(ԲՈՂԿ)

93. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի սընանի, սը տընանի,
Դուս սը գալ՝ գելը կը տանի:

(ՍՈՒՆԿ)

94. Մի շամփուր միս,
Վեչ էքի ա, վեչ վերցի:

(ՍՈՒՆԿ)

95. Էն ի՞նչն ա, ինչը.
Ճերմակ սինի,
Կարմիր գինի:

(ՍՈՒՆԿ)

96. Էն ի՞նչն է, ինչը.
Ջուր կըխմի ճվերից,
Ոսկի կածի բեղերից:

(ՀԱՄԿ)

97. Էն ի՞նչն ա, ինչը.
Ռոնեմ բոնովս մին,
Ծաղ տամ աշխարհովս մին:

(ՑՈՐԵՆ)

98. Էն ի՞նչն ա, ինչը,
Ճտնոը դսի կռանն ա,
Փեթակը միչի կռանը:

(ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ)

99. Էն ի՞նչն ա, ինչը.
Կա մի ծառ,
Ծառի վրա մի կալ:

(ՍՐԵՎԱՏԱՂԻԿ)

100. Էն ի՞նչն ա, ինչը.
Իմ պապը սարին,
Ղուշը կատարին,
Ճուտերը փորին:

(ՍՐԵՎԱՏԱՂԻԿ)

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

101. Էն ի՞նչն ա, ինչը.
Ջինթը ոսկորից,
Միրուքը մսից:

(ԱՔԱՂԱՂ)

102. Էն ի՞նչն ա, ինչը.
Չորս կոխիչ, չորս չգիչ ունի,
Երկու բչիչ, մի աղմբտըմբիչ:

(ԿՈՎ)

103. Էն ի՞նչն ա, ինչը.
Ծնվում ա, ամա ծնում չի,
Ծաա ըշխատում ա, քիչ ուտում:

(ՋՈՐԻ)

104. Մի ծառ կա, ճղքերը երկար-երկար, հըմա պտուղ բռնըմ չի:

(ԵՂՋԵՐՈՒ)

105. Էն ի՞նչն ա, ինչը.
Ունք ունի,
Քունք ունի,
Տերև չունի,
Ճուխկն ունի:

(ԵՂՋԵՐՈՒ)

106. Էն ո՞ր կենդանին ա, որ օխտը տարենը մհետ ա ցուլ գալի:

(ՓԻՂ)

107. Սև ա սաթի նման,
Սպիտակ ա կաթի նման,
Պլուլիկ ա քոչկի նման,
Իրգեն ա իլիկի նման:

(ԿԱՋԱՂԱԿ)

108. Էրգան ա իլիկ,
Կարճ ա պիլիկ,
Սև ա սաթիկ,
Սպիտակ ա կաթիկ:

(ԿԱՋԱՂԱԿ)

109. Էն ի՞նչն ա, ինչը.
Մըսա մըրուք,
Ջըլլա լեկու:

(ՀԱՎ)

110. Էն ի՞նչն ա, ինչը.
Ծորերը խատուտիկ,
Փափախը կարմիր,
Ոանները քոպիկ:

(ՀԱՎ)

111. Վեր եմ ունում, քար չի,
Ձու ա ածում, հավ չի,
Խոտ ա ուտում՝ կով չի:

(ԿՐԻԱ)

112. Էն ի՞նչն ա, ինչը.
Տրսիկ ոսկոր ա, ներսիկ՝ միս:

(ԿՐԻԱ)

113. Էն ի՞նչն ա, ինչը.
Ծափ ասամ՝ չոլ ա,
Լոք ասամ՝ գոլ ա:

(ՆԱԳԱՍՏԱԿ)

114. Նուռը, նուռը, թամքի դուռը,
Ըսուիան ընկավ ջրի էն կուռը:

(ԳՈՐՏ)

115. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի չի ունեմ, հեծնել լինում չի,
Մի դամիշ ունեմ, ըռնել լինում չի:

(ԱՃԹ ԵՎ ՕՁ)

116. Էն ի՞նչն ա, ինչը.
Մսե շամփուր՝ տափի տակ:

(ՕՁ)

117. Էն ի՞նչն ա, ինչը.
Դռան տակին՝ չալ դամշի:

(ՕՁ)

118. Էն ի՞նչն ա, ինչը.
Ջլե ալուլման,
Նխշուն թումրան,
Ոչ դին ունի, ոչ դուման:

(ՕՁ)

119. Էն ի՞նչն ա, ինչը.
Սարմինը մսիկ,
Մաշկը՝ փշիկ:

(ՈՋՆԻ)

120. Էն ի՞նչն ի.
Խոդե թվանք,
Մսե գյուլլա:

(ՄՈՒԿ)

121. Էն ի՞նչն ա, ինչը.
Սալիկ գցեն՝ կոտրիլ չի,
Ձորիկ գցեն՝ կոտրիլ չի,
Ըղունգիդ տակը ընկնի՝ կը կոտրի:

(ՄԻՋԱՏ)

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐ

122. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի տուն ունի իր խոհանոցը,
Քանվորները, դուռ-լուսամուտը, աղացը:

(ԱՄԱՐԴ)

123. Մե թախչա ճան ունեմ:

(ԱՏԱՄՆԵՐ)

124. Սև սալա, սպիտակ սալա,
Խաթունը միջին կը սըլսըլա:

(ԱՋՔԵՐ)

125. Էն ի՞նչն ա, ինչը.
Մսե տուն,
Մապե սրահ:

(ԱՋՔԵՐ)

126. Էն ի՞նչն ա, ինչը.
Քշերը աղա,
Ցերեկը՝ ծառա:

(ՍՁՔԵՐ)

127. Էն ի՞նչն ա, ինչը.
Էրկու ախպեր
Իրար տենում չեն:

(ԱՉՔԵՐ)

128. Մի մարագ,
Մեչը լիքը ուրագ:

(ԲԵՐԱՆ)

129. Ս ր պատուհան,
Սեպերով լիքը:

(ԲԵՐԱՆ)

130. Ս ր աղլուխ ունեմ,
Ուզում եմ չորացնի՝ չեմ կարում:

(ԼԵԶՈՒ)

131. Երկու տուն, մեջը մի սուն:

(ԴՈՒԹ)

132. Մի սնանի,
Էրկու դռնանի,
Գիշեր-ցերեկ կքանի:

(ԴՈՒԹ)

133. Ասում եմ. «Արի, արի», չի գալիս,
Ասում եմ. «Մի գա, մի գա», գալիս ա:

(ՇՐԹՈՒՆՔՆԵՐ)

134. Էն ի՞նչն ա, ինչը.
Հինգ ծառ,
Մեջը կալ:

(ՁԵՌՔ)

135. Մի կալ,
Կալի վրա հինգ ծառ,
Հինգ ծառի վրա
Հինգ սալ:

(ՁԵՌՔ)

136. Մի սարի դոշին՝
Էրկու բոքոն:

(ՍՏԻՆՔՆԵՐ)

137. Էրկու շամամ,
Մի դոշում վեր ընգած:

(ՍՏԻՆՔՆԵՐ)

138. Էն ի՞նչն ա, ինչը.
Անվարել դուս էկավ,
Հնչեցինք՝ կերվավ ոչ:

(ՄԱԶԵՐ)

139. Մսի լուլա,
Հացի գյուլլա:

(ԿՈԿՈՐԴ)

140. Տրափա տակին,
Դունչդ ո...ս տակին,
Սաղ չի,
Մեռած չի,
Գա քնթովդ դիպչի,
Պնչովդ դիպչի,
Դուս թռչի:

(ԴԱԶ)

ՄԱՐԴԿԱՑԻՆ ԿՑԱՆՔ

141. Էն ի՞նչ քնող ա,
Որ միսը կտրես՝ կարթնիլ չի:

(ՄԵՌԵԼ)

142. Մութը տուն,
Մարդու բուն:

(ԳԵՐԵԶՄԱՆ)

143. Ում պետք է՝ նա չի տեսնում,
Ում պետք չէ՝ նա է տեսնում:

(ԳԵՐԵԶՄԱՆ)

144. Էն ի՞նչ տուն ա,
Ծինողն ուրախանա,
Մեջը մտնողը չիմանա:

(ԳԵՐԵԶՄԱՆ)

145. Էն ի՞նչ ճամփա ա,
Որ գնում են, էլ գալիս չեն:

(ՄԱՀ)

146. Գիտեմ, որ կա,
Բայց չգիտեմ, երբ կգա:

(ՄԱՀ)

ՈՒՏԵԼԻՔ-ԽՄԵԼԻՔ

147. Սպիտակ քար եմ սարիկը,
Հեռանալ չեմ սուփրիկը,
Ով ինչանիկ ուտի ոչ,
Քան չի հսկանա կերածիկը:

(ԱՂ)

148. Անջուր ջաղաց,
Անկրակ բաղարջ:

(ՄԵՂՐ)

149. Էն ի՞նչն ա, ինչը.
Միպտակ հլիվոր,
Դեղին թագավոր:

(ԹԱՆ ՈՒ ԿԱՐԱԳ)

150. Միպտակ օքա,
Դեղին քոքա:

(ՁՈՒ)

151. Էն ի՞նչն ա.
Մեջը ոսկի,
Դուրսը՝ էրծաթ:

(ՁՈՒ)

152. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի ուսաա օրը մի օթախ ա շինում,
Բայց որ վրիկը մի քար վեր ունեն,
Տասն ուստա էլ գա՝
Կարալ չեն տունը սղլսցնեն:

(ՁՈՒ)

153. Էն ի՞նչն ա, ինչը.
Սլուլիկ, կլուլիկ,
Ոնչ դուռ ունի, ոնչ կտուրիկ:

(ՁՈՒ)

154. Էն ի՞նչն ա, ինչը.
Քանի քաշես՝ կարճընա:

(ԾԽԱԽՈՏ-ԾԽԱՄՈՐՃ)

155. Մի եկը համ ուտում ա,
Համ վեր ածում:

(ԾԽԱԽՈՏ-ԾԽԱՄՈՐՃ)

156. Դարման կուտի
Սոխիր կը թքի:

(ԾԽԱԽՈՏ-ԾԽԱՄՈՐՃ)

157. Պուճուր թոնիր,
Կրակով լիքը:

(ԾԽԱԽՈՏ-ԾԽԱՄՈՐՃ)

ՀԱԳՈՒՍՏ - ԿԱՊՈՒՍՏ

158. Դնեմ գլխիս՝ կլցվի,
Վեր ունեմ՝ կդարդակվի:

(ԳԼԽԱՐԿ)

159. Սև շունը
Պատեն կախ է:

(ԹԱՓՆՋԻ)

160. Ծերեկը հագս,
Քշերը՝ տակըս:

(ԹԱՓՆՋԻ)

161. Որ կապում եմ, ման ա գալի,
Որ բաց եմ թողնում, կանգնում ա:

(ՏՐԵԽ)

162. Մի թավում մի կրոր դմակ,
Թավեն կը մաշի,
Դմակը հալվիլ չի:

(ՏՐԵԽ)

163. Մի հոր ունեմ,
Ամեն ռանգի սրատաքար ունի:

(ԳՈՒԼՊԱ)

164. Էն ի՞նչ ա, ինչը.
Մսե սյուն,
Ոսկե առուն:

(ՍԱՏԱՆԻ)

165. Պուճուր ծիտը՝ մարդին սիրեկան:

(ՈՍԿԵԴՐԱՄ)

166. Էն ի՞նչ ա, ինչը.
Տափումը թաղես՝
Փթիլ չի:

(ՈՍԿԵԴՐԱՄ)

ՀՈԳԵԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

167. Էն ի՞նչն է, ինչը.
Ասված ստեղծել է մի բան,
Մարդը աեսնում է, աստվուծ չի տեսնում:

(ԵՐԱՋ)

168. Ջշերքումն չլ քաշվիլ,
Ըապարումն չի ծախվիլ,
Նրա պես քաղցր բան չկա:

(ՔՈՒՆ)

169. Էն ի՞նչն է, ինչը.
Եղիցը լավն ա,
Մեղրիցը քաղցր:

(ՔՈՒՆ)

170. Էն ի՞նչ ղուշ ա, որ ոնչ միս ունի, ոնչ՝ ոսկոր,
Ամա նրանից անուշ բան չկա,
Որ թոավ էլ՝ պրծար:

(ՀՈԳԻ)

171. Ծիտը թոավ,
Ըունը մնաց:

(ՀՈԳԻ ԵՎ ԱՌԱՐՄԻՆ)

172. Էն ի՞նչն ա, ինչը.
Իմ պապը՝ վավեվավ,
Գոսիկ ունի հարիր գավ:

(ՄԻՏՔ)

173. Էն ի՞նչն ա, ինչը.
Որ կողմ ֆգեմ՝ կգնա:

(ՄԻՏՔԸ)

174. Ըսաի չոքում եմ,
Երևան ջուր խմում:

(ՄԻՏՔ)

ԲԻԲԼԻԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ

175. Քամին էկավ, հով բերես,
Եկը ծնես, կով բերես:

(ԱԴԱՄ, ԵՎԱ)

ԳԻՐՔ, ԳԻՐ, ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ, ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ

176. Էն ի՞նչն ա,
Գլուխը կտրեմ,
Միրտը հանեմ,
Ջուր տամ, խոսի:

(ԳՐԻՋ)

177. Աշխարհումս մի հավք կա,
Ամեն բան նրա կտցից կախ ա:

(ԳՐԻՋ)

178. Սնակոլոլը սնակոլոլումը թըթախեցին:

(ԳՐԻՋ-ԹԱՆԱՔԱՄԱՆ)

179. Էն ի՞նչն ա, սև սերմ, սպիտակ հող,
Ձեռքով ցանեմ, աչքով հնչեմ:

(ԳԻՐ)

180. Էն ի՞նչն ա, ինչը,
Սև-սև ճուտեր,
Սպիտակ թուխսը:

(ԳԻՐ)

181. Ոչ բերան ունի, ոչ լեզու,
Համա մարդի հետ խոսում ա:

(ԳԻՐՔ)

182. Էն ի՞նչն ա, եթե խոսես, կխոսի,
Թե թողնես, կքնի, հավիսյան մեռնիլ չի:

(ԳԻՐՔ)

183. Ոնչ տեղից վեր քըցեմ՝ կոտրվիլ չի,
Ճրի մեջ քըցեմ՝ կը փխլվի:

(ԹՈՒՂԹԸ)

184. Էն ի՞նչն ա.
Քարակ ղամիշ,
Մեջն արճիճ:

(ՄԱՏԻՏ)

185. Էն ի՞նչն ա, ինչը.
Էստեղ ցանիմ,
Ստամբոլ քաղիմ:

(ՆԱՄԱԿ)

186. Էն ի՞նչն ա, ինչը.
Քաղաք կա՝ տուն չկա,
Ծով կա՝ ջուր չկա:

(ՔԱՐՏԵԶ)

187. Էն ի՞նչ մարդ ա,
Որ տարիներով կանգնած ա,
Քայլ չի քեկարում:

(ԱՐՁԱՆ)

188. Օրորոցում յոթ ախպեր են պառկած,
Որ յեռ աաս՝ սուգ ու լայ կանեն:

(ՍԱԶ)

189. Վերցնում եմ յեռքս՝ լայ ա ըլում,
Վեր եմ դնում՝ յենը կտրում ա:

(ՍԱԶ)

190. Ալալա, բալալա,
Տա՛ր, խաղ արա,
Քե՛ր, կախ արա:

(ԱԱԶ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԵՐ

191. Էն ի՞նչ ա, ինչը.
Օրոս ախպեր վազըմ են իրար հետ,
Ոնչ իրար աղաք են ընգնում,
Ոնչ իրարիս եդ են ընգնում:

(ԱՆԻՎՆԵՐ)

192. Էն ի՞նչն ա, ինչը.
Սարեն կգա սըլվըլալեն,
Ոսկե բեղեր պըլպըլալեն:

(ԳԵՐԱՆԴԻ)

193. Արաբ խանը բեղն ըլորեց,
Հարուր հպարա մարդ գլորեց:

(ԳԵՐԱՆԴԻ)

194. Էն ի՞նչն ա, ինչը.
Գել ա գալի, սել ա գալի,
Սարի սմբուլ վեր ա գալի,
Ոտներ չունի՝ ման ա գալի,
Քերան չունի՝ կուլ ա տալի:

(ԳԵՐԱՆԴԻ)

195. Էն ի՞նչն ա, ինչը.
Արծիվը մոմոում ա,
Սև դևը պատռվում ա:

(ԳՈՒԹԱՆ)

196. Էն ի՞նչ դուշ ա, որ էրկու թև ունի,
Էրկուսն էլ մի կոխկի վրա:

(ԳՈՒԹԱՆ)

197. Էն ի՞նչն ա, ինչը.
Սարիկը գալիս ա սպի պես,
Կոները մենչ ծառի պես,
Կաղնըմ ա, որ ջուր խմի,
Ձեն ա ածում ուլի պես:

(ԱԱՑԼ)

198. Էն ի՞նչ ա, ինչ.
Մի ըրեխա ունեմ,
Երբ վեր եմ ունում՝ լայ ա ըլում,
Երբ վեր եմ դնում՝ սուս ա անում:

(ՇՂԹԱ)

199. Սև սաաանեն սարն ելավ,
Անհամբարքը վեր էրավ:

(ԱԾԵԼԻ)

200. Հուլունքանոց,
Հուլ պըաանոց,
Ուլանն էկան
Կարմրակտուց:

(ԳՈՐԳ)

ԿԱՌՈՒՑՑՆԵՐ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

201. Էն ի՞նչն ա, ինչը.
Սև ջունը դռանը կապած,
Ոչ հաչում ա, ոչ կըծում,
Ոչ էլ մարթ ա նի թողնում:

(ԿՈՂՊԵՔ)

202. Ձին գնաց,
Թամքը մնաց:

(ԿԱՄՈՒՐՋ)

203. Էն ի՞նչն ա, ինչը.
Էրգեն մարդ,
Կարճ գոտի:

(ԿԱՄՈՒՐՋ)

204. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի գումեշ ունիմ,
Սարումը կթում եմ,
Գեղումը եղը վեր գեր:

(ՁԻԹՀԱՆԴ)

205. Էն ի՞նչն ա, ինչը.
Ջշերը լքվում ա,
Ցերեկը դուրդուկվում:

(ԳՈՄ)

206. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի ծիտ՝ մի տուն կը պահե:

(ԲԱՆԱԼԻ)

207. Էն ի՞նչն ա, ինչը.
Հլորես,
Արխային քնես:

(ԲԱՆԱԼԻ)

208. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի դար կա,
Օրոս սնանի, մի կտրանի:

(ՏՈՒՆ)

209. Էն ի՞նչն ա, ինչը.
Ուտում ա, ուտում, կշտանում չի:

(ՋՐԱՂԱՑ)

210. Մի յորումը երկու արջ քոլոլ-քոլոլ են գալիս:

(ՋՐԱՂԱՑ)

211. Էն ինչն ա.
Գլխով ուռում ա,
Փորով թափում:

(ՋՐԱՂԱՑ)

212. Էն ի՞նչն ա, ինչը.
Քանի կրեմ՝ կերկննա,
Քանի տաշեմ՝ կը հասանա:

(ՀՈՐ)

213. Էն ի՞նչ ա, ինչ.
Սաղ տարին յեն ա տալի՝
«Վա՜յ ուսըս, վա՜յ ուսըս»:

(ՍՅՈՒՆ)

214. Օրոս ախպեր,
Օրսն էլ մի գդակի տակի:

(ԱԵՂԱՆԻ ՈՏՔԵՐԸ)

215. Ըստիան ընդի՝ Վան, Ըրևան,
Ոսկե չադիր, մեջը՝ դիվան:

(ՓԵԹԱԿ)

ՄԵՔԵՆԱՆԵՐ

216. Ձին գնաց,
Նալը մնաց:

(ԳՆԱՑՔ-ԵՐԿԱԹՈՒՂԻ)

217. Էն ի՞նչ ա, ինչը.
Երկար չվան,
Մինչ Երևան:

(ԳՆԱՑՔ-ԵՐԿԱԹՈՒՂԻ)

218. Կերթա, կերթա, իպ չունի,
Ետ կդառնա՝ թոպ չունի,
Կյանքը ջրում կմաշի:

(ՆԱՎ)

219. Տասերկու գլուխ, վաթսուն մատ,
Կաշին փայտ, միսը՝ էրկաթ:

(ԺԱՄԱՑՈՒՑՑ)

220. Մի սև քաղաք,
Մեջն աղաղակ:

(ՌԱԴԻՈ)

221. Էն ի՞նչն ա, ինչը.
Երկար տարի, կարճ գարի,
Խաբար տանի, թե՝ թեպ արի:

(ՀԵՌԱԳԻՐ)

222. Մի սև տնակ՝ վրեն գերան,
Մի կողմն ականջ, մի կողմը՝ բերան:

(ՀԵՌԱԽՈՍ)

223. Էն ի՞նչ ա, ինչը.
Փորին խուտուտ եմ տալի՝ ծլվլում ա:

(ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԶԱՆԳ)

ՁԵՆՔԵՐ

224. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի ոտնանի,
Քեզ կաանի:

(ՄԱՀԱԿ)

225. Էրկան քուչա,
Մեջը փուչ ա:

(ՀՐԱՑԱՆ)

226. Էն ի՞նչն ա, ինչը.
Ծիտը թռավ,
Քունը մնաց:

(ԳՆԳԱԿ)

227. Մթին տուն,
Արաքը քուն:

(ԹՈՒՐ)

228. Ինքը մեջը,
Պոկերը դուսը:

(ԹՈՒՐ)

ՏՆԱՑԻՆ-ԿԵՆՑԱՂԱՑԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԻՐԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐ

229. Էն ի՞նչն ա, ինչը.
Աք տաամ, լոք տամ,
Ջյանքուլիսդ ֆիգ տամ:

(ԱԱՆԴԵՐՔ)

230. Հինգ ախպեր են, իրար հեննա, վապըմ են,
վապըմ են, իրար հտանըմ չնն:

(ԳՈՒԼՊԱՑԻ ՃԱՂԵՐ)

231. Էն ի՞նչն ա, ինչը.
Ինքը կարճ հլիվոր,
Հագին էրգեն փիլոն:

(ԱԱԵՂ-ԹԵԼ)

232. Էն ի՞նչն ա, ինչը.
Լպստեմ՝ ծակը մտցնեմ:

(ԱԱԵՂ-ԹԵԼ)

233. Էն ի՞նչն ա, ինչը.
Էրկաթե լուլա
Մսե գյուլլա:

(ՄԱՏՆՈՑ)

234. Էն ի՞նչն ա, ինչը.
Քմակին հուպ տամ՝
Արուճ անի:

(ՄԿՐԱՏ)

235. Էն ի՞նչն ա, ինչը.
Փեաե պառավ,
Էրկաթե գլուխ:

(ԿԱՑԻՆ)

236. Էն ի՞նչն ա, ինչը.
Մարմինը փետիկ,
Ծերն՝ էրկաթիկ:

(ԴԱՆԱԿ)

237. Անջուր ջաղաց:

(ԵՐԿԱՆՔ)

238. Էն ի՞նչն ա, ինչը.
Վերևիկ լյնեմ,
Կողքիկ թափվի:

(ԵՐԿԱՆՔ)

239. Երգեն քուչա,
Մեջը փուչ ա:

(ԽՆՈՑԻ)

240. Էն ի՞նչն ա, ինչը.
Մի կով ունեմ՝ կողքը ծակ:

(ԽՆՈՑԻ)

241. Էն ի՞նչն ա, ինչը.
Կերթա, կգա,
Մորդ փորին բարև կտա:

(ԽՆՈՑԻ)

242. Էն ի՞նչն ա, ինչը.
Տանեմ խաղ անեմ,
Բերեմ պասիկ կախ անեմ:

(ՄԱՂ)

243. Բերդն երերեր,
Տակին չին գեր:

(ԱԼՅՈՒՐՄԱՂ)

244. Էն ի՞նչն ա, ինչը.
Էս կողմը դար,
Էն կողմը դար,
Մեջն արդուր:

(ԽՄՈՐԻ ՏԱՇՏ)

245. Էն ի՞նչն ա, ինչը.
Գոմեշը գոլումը,
Պոչը չոլումը:

(ՇԵՐԵՓ)

246. Լիքը տանեմ,
Դարդակ ղերեմ:

(ԳԴԱԼ)

247. Ալ եզը,
Չալ եզը,
Քանի բարչեմ,
Տար եզը:

(ԳԴԱԼ)

248. Փոքրիկ եկեղեցի,
Չոքեցի, թխեցի:

(ԹՈՆԻՐ)

249. Էն ի՞նչն ա, ինչը.
Քրդնած տերտերը տուն են բերում:

(ԻՆՔՆԱԵՌ)

250. Չորս կողմը ջուր,
Մեջը՝ հուր:

(ԻՆՔՆԱԵՌ)

251. Մի խորոմ խոտ,
Կողքը՝ ցխոտ:

(ԿՈՒԺ)

252. Երգան աղիք,
Ծերը՝ ծաղիկ:

(ԺՐԱԳ)

253. Մի օյ ունիմ՝
Հուլը ղոխին:

(ԺՐԱԳ)

254. Էն ի՞նչն է.
Մել է սեռը,
Ոսկե բեռը:

(ՕՐՈՐՈՑ-ԵՐԵԽԱ)

255. Էս կողմը դար,
Էն կողմը դար,
Մեջն անդաղար:

(ՕՐՈՐՈՑ-ԵՐԵԽԱ)

256. Ցերեկը նորահարս,
Գիշերը՝ դարավաշ:

(ԱՆԿՈՂԻՆ)

257. Ցերեկը լքցվում է,
Գիշերը դարդակվում է:

(ԱՆԿՈՂԻՆ)

258. Էն ի՞նչն ա, ինչ.
Երկու ծերը կապուկ,
Մեջը՝ փափուկ:

(ԲԱՐՁ)

259. Էս ղեղը սար,
Էն ղեղը սար,
Միջին գյուլ բհար:

(ՀԱՑԵԼԻ)

260. Ըսսի պուպուկ, ընդի պուպուկ,
Դոան տակին շնապուպուկ:

(ԱՎԵԼ)

261. Էն ի՞նչն ա, ինչը.
Հանդի քոթուգ,
Գեղի իշխան:

(ԿՈՏ)

262. Էն ի՞նչն ա, ինչը.
Էրկուսը լախ, մինը՝ կախ,
Գամ չեր տուն, տուր իմ հախ:

(ԿՇԵՌՔ)

263. Քանի սաղ էր՝ խոտ ու դարման էր ուռում,
Եփ որ մեռավ՝ գինի էր խմում:

(ՏԻԿ)

264. Ի՞նչն ա.
Մի ոչխուսր ունենք,
Որ մորթես՝ արին չի գնալ:

(ՏԻԿ)

265. Էն ի՞նչն ա, ինչը.
Ափալաս, ափլիփալաս,
Անըմը տամ՝ ոչ իմանաս:

(ՓԱԼԱՍ)

266. Էն ի՞նչն ա, ինչը.
Վրեն դնեմ հախ անեմ,
Ցորս կոնովը կախ անեմ,
Պոչի տակին բանդ անեմ,
Նսաիմ վրեն՝ հանդն անեմ:

(ԹԱՄԲ, ԱՍՊԱՆԴԱԿՆԵՐ, ՍԱՆՋ)

267. Էն ի՞նչն ա, ինչը.
Ձիուց բանցր ա,
Ծնիցը՝ ցած:

(ԹԱՄԲ)

ԲԱԶՄԱՌԱՐԿԱ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

268. Անբուսը անծնին վեր ելավ, անդադտրի գլխովն անց կացավ:

(ԱՂ, ՋՈՐԻ, ԳԵՏ, ԿԱՄՈՒՐՋ)

269. Թուր ու թվանք թամքումը,
Ջուխտ ադունակ վանքումը:

(ՀԱՐՄ ՈՒ ՓԵՍԱ)

270. Էն ի՞նչն ա, ինչը.
Աշխարքից երեք բան ա սրսկաս:

(ԵՐԿՆՔԻՆ՝ ՍՅՈՒՆ,
ԵՈՎԻՆ՝ ԵԱՇԿՈՑ,
ՋՈՐՈՒՆ՝ ԾՆՈՒՆԴ)

271. Էն ի՞նչն ա, ինչը.
Ջուրը կոխես՝ թրջվիլ չի,
Գեդնըմը թաղես՝ փթիլ չի,
Միսը կտրես՝ կարթնիլ չի:

(ԲԱԴ, ՈՄԿԻ, ՄԵՌԵԼ)

272. Էն ի՞նչն ա, ինչը.
Օխտը ախպեր են,
Մե գլուխ, մե պորտալար:

(ԱԿԼԱՏԻՋ)